



Տարեկան գինն է 6 Արծաթ Մեհիարի.
Վեցամսեայ 3 1/2
Մեկ ծանուցումը տողին 2 դուրուշ է
Ստորագրութիւնները կանխիկ են:
տարադրութիւնները ամեն ամսոյ ինն եւ
15րդ կըսկսին:

Դուրս երթալիք լրագիրներուն համարուն
ծախքը առ նոյնի վրայ է:
Լրագրոյս վերաբերեալ ճամակ կամ որ եւ
իցէ գրութիւն խմբագրին պիտի ուղ-
ղուի. եւ ասոնց համար ծախքը խըր-
կողին վրայ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՊՈՐՍՍՅՈՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀԵՌԱԳՐԱՆՈՒ

Լոնտրա 14 սեպտեմբեր

Օրմ. Բոնոօրիտէ՝ 50/8 50/8
Օրմ. Փոխառութիւն 1858/1 681/2 69
Օրմ. Փոխառութիւն 1862/1 693/4 70

Փարիզ 14 սեպտեմբեր

Օրմ. Բոնոօրիտէ՝ 30/1/16 50/1/16
Օրմ. Փոխառութիւն 1865/1 557 50
Օրմ. Պանքա՝ 671/1

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Այս օրը ինչպէս զեպտեմբերի իր նիւ-
տերը շարունակել սկսաւ, բայց խորաբա-
նան կարգադրութիւնները ծանր յառաջ
կերթան, զիստորակէս գրամական խնդ-
րոյն պատճառաւ, որուն մէջ Տանիմար-
քա չուզեր զիջանիլ: Սահմանայ բաժան-
ման խնդրոյն մէջ՝ քիչ մը երկիր աւելի
կամ պակաս ունենալը մեծ շահ կամ վե-
նաս մը չէր բերեր: Տանիմարքայի իսկ դը-
քանական խնդրոյն մէջ՝ գերմանական տե-
րութեանց պահանջներէն այն աստիճան
ծանր է, կրնան, որ Տանիմարքայի կառա-
վարութիւնը՝ որչափ և փափաք ունենայ
ժամ առաջ վերջնական որոշման համե-
լու, այս կէտին վրայ չպիտի կրնայ զիջանիլ,
փասն զի վրան դրուած բեռնին տակ ընկ-
նելուն տարալոյս չկայ:

Արտուի թէ Վաղդիս Մեգլիս և
Պոստիս տեսնելով գերմանական երկու
մեծ տէրութեանց պայտէս խտրութիւն
քանակն իրենց տկար որակն վրայ, զոր րո-
յորովին փառքները միտք ունին, միտքա-
նութեամբ առաջարկեցին Քրուսիոյ և
Քաթոլիկ կառավարութեանց որ Շէշ-
վիկ Զօրթէ յիս խնդիրը ժամ առաջ վերջ-
նական կերպով կարգադրեն, որպէս զի
Դիւթիմարի գրաւումնաւ՝ որ իսկ Տա-
նիմարքան ճշդեւ և սպառնալու միջոց մ'է,
ժամ առաջ վերջնայ:

Այս օրը ինչպէս Քրեթիմարի Դիւթի-
մար լրագիրը սեպտեմբեր 6 թուով լուր
կուտայ թէ Շէշվիկ Զօրթէ յիս խնդ-
րոյն համար Այս օրը ինչպէս Քրեթիմարի
պանաթոքովը նոյն օրը վերստին գումար-
ուեր է:

Նոյն լրագիրը կը գրէ նաեւ թէ Տա-
նիմարքայի երեսփոխանները նոր հրահանգ-
ներ ընդունել են Քրեթիմարին, որոնք
կրնա մնայած խնդրոյն յաջող ելք մը տա-
լու և ծագած դժուարութիւնները լու-
ծելու արամադրութիւն ունին եղեր:

Քանի մը լրագրաց խօսքին նայելով,
գաղղիացւոյ Ա. Վարօլէն կայսրն ու
Քրուսիոյ Ա. Սիլվիոն թագաւորը մօտ
օրերս Քէն գետին ելքերը տեսակցութիւն
մը պիտի ընեն:

Մեծօրիալ Տերօմարթիք լրագիրը կը
հաւատնէ թէ Քրուսիոյ թագաւորը գաղ-

ղեական զօրաց Շէշվիկի գաղտնի մէջ
նեղը զնուորական մեծ կրթութեան ներ-
կայ գտնուելու առթիւ զբիւր Քուսիոյ
լրագրական յանձնարարութիւն ըրեր է որ
Ա. Վարօլէն կայսրը այն տեսակցու-
թեան հրաւիրէ: Միւս կողմանէ գերմա-
նական լրագիրներն ալ կրնան թէ Վա-
րօլէն կայսրն հրաւիրել է Վիլհելմի
թագաւորը: Բայց բրուսիական զօրաց ը-
նկերը զնուորական կրթութիւնը պատ-
ճառ բռնելով՝ Ա. Սիլվիոն թագաւորը
Պէտլին գաղտնաւ հարկադրած ըլլալն
յայտնել է:

Յունաստանի մէջ այս օրերս դէպք
մը պատահեցաւ, որ միտքերը բաւական
գրգռելով երկրին խաղաղութիւնը վայր-
կեան մը փառնելի մէջ ձգեց:

Ազգային երեսփոխանաց ժողովին նոր
նախագահ մ'ընտրել պէտք ըլլալով, կա-
ռավարութեան կողմը բռնող մասին կող-
մանէ ընտրել առաջարկուած Պ. Մե-
սինէզիս երեսփոխանը քառսուն ձայնից
առաւելութեամբ նախագահ ընտրուեցաւ:
Հակառակորդ մասը՝ որուն առաջարկած
ընտրելին էր Տէրիտորի, վերաբերելով
յոյսէն, սկսաւ թագաւորն և արքունիքը
բաժանել ըսելով թէ գաղտնի հնարքնե-
րով ազդեցութիւն բանեցուցեր են ընտ-
րութեան վրայ: Ասոյն կողմանից լա-
զիկներն ալ կ'ուն յօդուածներ զրեցին
արքունեաց դէմ, յայտնադէմ ամբաստա-
նելով թագաւորին խորհրդական Սթեֆ-
կոման և բանակի օգնական Պ. Մեթաք-
աս:

Բլաթիկա անուն երեսփոխան մ'ալ
օրոտ. 28 ին առաւօտուն նախատալից
նամակ մը թագաւորին գրելով, թագա-
ւորն անմիջապէս այն նամակը երեսփոխ-
նական ժողովին ղրկեց՝ խնդրելով որ հե-
ղինակին դէմ իշտամբանայ քուէ արտի:

Այս օրը ստորի վէճ մը ծագեցաւ
խորհրդարանին մէջ, և դեռ խնդիր տա-
նալով՝ երկու հակառակ կողմերն սկսան
թշուառներ տեղալ իրարու վրայ և մինչև
անգամ ծեծկուել: Ա. երջապէս խառ-
վութիւնը կամ մանաւանդ կռիւն այն
աստիճան սաստկացաւ, որ վերջապէս մա-
սը ձգեցին փախան խորհրդարանէն:

Այս անկարգութեան լուրը քա-
ղաքին մէջ տարածուելով, փայրկեան մը
փախուցեցաւ որ խորհրդարանի կռիւը քա-
ղաքական պատերազմի կը փոխուի, բայց
լրագրագրութեան ամեն մտքը իր տւերը քա-
ղաքացիները զօրաց խտրութիւն
պարտելով՝ անկարգութիւն մը չպատա-
հեցաւ:

Սահայն քուրհանդակին եւճ ժամա-
նակը կրտսէր թէ գաւառաց մէջ տեղ տեղ
յոյրեր եղեր են կառավարութեան դէմ,
և կը փախուցնէ որ Յունաստանի երկիրը
նորէն դժեղակ փորձերու ենթակայ կը-
լայ:

Վերսիկայէն եկած վերջին լուրերն ա-
ռաւել քաղաքականութեան նկատմամբ
կարեւոր են քան թէ վերական:

Ինքօն նախագահին դէմ ժողովրդ-
եան հակակրօնութիւնն օր քան օր աւելնա-
լու վրայ է՝ ամբաւ արիւնհեղութեանց:

աւերմանց և անդարմանելի վնասուց պոտ-
ճառ բլրալուն համար: Հիւսիսայնոյ
Արանթ զօրապետը վերջին օրերս քա-
նի մը յաջողութիւններ ձեռք բերել
է, բայց ասոնց պատճառը հարաւայ-
նոյ Ա. զօրապետին զօրութեան բաժնը
էին և հիւսիսայնոյ երկիրներուն մէջ ա-
պատակութեան զրկուելն է, որով Քիչ-
մօնա մայրաքաղաքին մօտ հարաւայնոյ
ունեցած զօրութիւնը նուազած ըլլալով,
Արանթ զօրապետը կարող եղեր է քանի
մը յաջող բայց ապարդիւն շարժումներ
ընելու, և հարաւային գաւառաց Քիչ-
մօնայ հետ ունեցած յարաբերութիւնը
կարելու: Սահայն Քիչմօնայ այնպէս լա-
տարացած է, որ հիւսիսայնոյ յարձա-
կումներէն բնաւ երկիւղ չունի:

Վաղդիկ լրագիրները կը ծանուցա-
նեն թէ Մաք-Մահման մարաշխաթ
Շէշվիկի ընդհանուր կառավարիչ ան-
ւաներ է:

Մեղիական Լեվանթ Զէրօյա լա-
գիրը կը ծանուցանէ թէ Մեթիկայի կա-
ռավարութիւնը Տրքիոյ Մարթինէզ
տէլ Քիօ սեպուհը Յունաստանի և Տա-
կապոսի լրագրի գետնային անուաններ է:

Ար հաւատեն թէ Յունաստանի հին
պարտքերը կարգադրելու համար բանակ-
ցութիւն մը սկսել է Մեղիոյ Վաղդիկ,
Ռուսիոյ և Հելլենական կառավարու-
թեանց մէջ:

Տանիմարքայի Քրեթիմարի մայրաքա-
ղաքէն սեպտեմբեր 7 թուով կը ծանու-
ցան թէ Մեղիոյ գահաժառանգ Աալ-
էսի իշխանն ու իշխանուհին հոն հասեր,
Ռուսիոյ գահաժառանգ Միկոլայոս մեծ
դուքսին հետ տեսակցել են:

Պէճիկայի Լիտեբանտան լրագիրը
սեպտեմբեր 2 թուով կը ծանուցանէ, թէ
Վարաճաղի Միքայիլ իշխանը ձիւն ի յա-
լով՝ անոյց ոսկորը կոտրել և բաւական
ծանր հիւանդ է եղեր:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Այս օրը ինչպէս հրամանաւ՝
Հաշուակալութեան ատենին անդամ
Ա. սեմ. Արթուր Վրիկոր էֆենտին կայ-
սերական հեռագրատանց ընդհանուր վե-
րատեսուչ անուանեցաւ:

Հեռագրատանց նախորդ վերատե-
սուչ Ա. սեմ. Տիրան պէյ հաշուակալու-
թեան ատենին անդամ անուանեցաւ:

Չամիկեան մեծապատիւ Օհաննէս
էֆենտին գանձաւոր պաշտօնատան օգնա-
կան (մուսավին) անուանեցաւ:

Արքունի Քաբուլէ պաշտօններէն թը-
րափնիքի գայմաքամ Ահմէտ պէյին զին-
դապետին աստիճան տրուեցաւ:

Տերութեան բարձրագոյն ատենին ան-
դամներէն Ա. սեմ. Մայրուլա էֆենտին
որդին Վաւուհէ պէյը թարգմանութեան
սենեակին վերատեսուչ անուանեցաւ:

Այս օրը ինչպէս ապարանին նախկին վե-

րատեսուչ Հաճի Թահիր էֆենտին հա-
տարակց կրթութեան ժողովին անդամ և
մայրաքաղաքի Վիշիթի ըսուած դպրոց-
ներուն տեսուչ անուանեցաւ:

Այս օրը ինչպէս հրամանաւ մը միայ-
նաբար Ռուսիական Խալիֆիէ կա-
մուրջը՝ լրագրատան Ասլիման Մահ-
մուտ երկրորդ Ինքնակալին շնորհիւ ըլլա-
լուն համար՝ Մահմուտիէ անուանեցաւ:

Ասիէց զատ հրաման եղաւ որ պառու-
հեան նոյն կամուրջէն անցնող ձիաւոր-
ները, կառքերը և բեռ կրող կենդանիներ-
ը տուրք մը վճարեն: Ըստ որում քանի
մը տարին անգամ մը նորոգութեան կա-
րատ ըլլալով՝ արքունի նուարանին մեծ
ծախուց պատճառ կըլլայ:

Ռուսի մօտերս գարձեալ նորոգուե-
լով, մուտքը Սուլթան Մահմուտի Վա-
քիին պիտի երթայ, և այսուհետեւ նո-
րոգութեան ծախքն ալ նոյն Վաքիին
կողմանէ պիտի վճարուի: աւելորդն ալ
այլ և այլ բարեգործական հաստատու-
թեանց պիտի տրուի: Իսկ առանց ձիու
կամ կառքի՝ ոտքով անցնողներն առաջ-
ւան պէս բան մը չպիտի վճարեն:

Մեղիոյ կառավարութիւնը Ա. Պոլ-
սոյ մէջ ունեցած հիւպատոսարանը վեր-
ջոյց է:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՅՈՒՄ

Ա. Պոլսոյ վառօգարանին վերաբեր-
եալ և անոր մերձակները գտնուած երկ-
րին վրայի չորս մեծ փառօքի մթերանոցնե-
րուն խիստ մօտերը քանի մը պարտէզներ
կան: Ոմանք ալ՝ յիշեալ երկիրներուն
մէջ ունեցած կամ վարձու բռնած ար-
տորէից հունձքին համար կարել (հարման)
հաստատած են: Սահայն այն արտորէից
մէջ քանի մը փայտաշէն հիւղեր (գուլպէ)
գտնուելէ զատ՝ նոյն իսկ կայքին ալ գիւ-
րակիւղի ըլլալով, Աստուած մի՛ արասցէ,
թէ որ հրդեհ մը պատահի և հալի ալ չի
ի վառօքի մթերանոցներուն կողմը փը-
ջէ, նոյն մթերանոցներուն անվտանգ պահ-
պանութիւնը անհնար կըլլայ: Ասոնցմէ
զատ, թէ՛ որտեղներու և թէ՛ ճանա-
պարհորդաց այն կողմերը պարտած ժա-
մանակին հրացան պարպելին ալ փառն-
գաւոր ըլլալով, բարեխնամ Աստուած իր
բոլոր հպատակաց զոյքն ու կենսքը պահ-
պանելու մասին ամեն քանի ի գործ դնե-
լու հետ արքունի գանձն ալ աւելորդ
ծախքերէ ազատ պահելու մասին անձանձիր
հոգածութիւն ունի, թէ՛ յիշեալ տեղե-
րու սահմանակից բնակիչները փառնուէ ա-
զատ պահելու և թէ՛ արքունի գանձն ալ
խնայելով վառօգարանի նոյն մթերանոց-
ներն անվտանգ պահպանելու նպատակաւ,
հրաման ըրաւ որ վերոյիշեալ արտորէից
մէջ եղած կայքերու հիւղերն անմիջապէս
վերջուին, և նոյն փառնուոր երկիրները
վառօգարանի վերաբերեալ ուրիշ անվո-
տանգ երկիրներու հետ փոխանակուին:
Ասիէ զատ թէ՛ որտեղներուն և թէ՛
ճանրորներուն ալ որոշ զին մը ջրջու-

նկու համար, Մարտի դիւղին արեւմտեան կողմէն մինչեւ Միւսմանցի ագարակը երթալու ճանրէն մինչեւ ծովեզերքը նոր բացուած ճանրուն երկայնութեանը վրայ ամեն մէկ 100 կանգուն տեղ մէկ մէկնը շանտախտակ անկուելով, վրանին տաճկերէն, յունարէն, հայերէն և գաղղիարէն լեզուով գրուեցաւ թէ ուր օր մի թերանոցներ գտնուելուն համար ով որ այս նշանատախտակներուն սահմանին մէջ բռնուի, հինգ օսմանեան լիւրաց տուգանք պիտի վճարէ: Աստի կը ծանուցուի հասարակութեան թէ ով որ նոյն նշանատախտակները մոխի չընելով որոշեալ սահմաններէն ներս պարտաւոր համարձակի, այնպիսիներէն վերալիշեալ հինգ օսմանեան լիւրաց տուգանքը առնուելու որոշում և հրաման եղած է կայսերական կառավարութեան:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թերթիւմանը Աշխարհ մէջ կը կարգանք թէ Սիւրբ (Պարսկ) կողմէն մէջ յոյն կնոջ մը դուռը երեք եղբիւր բռնուի, և տեղական իշխանութեան կողմէն կնոջ լուսանկար պատկերն առնուելով մայրաքաղաքը ղեկուեր է պէտք եղած ծանօթութիւններով, որոնք արքունի բժշկական գործընթացին քննութեանը յանձնուեր են:

— Օգտիւն հանդիսի խմբագիր Պ. Մինաս Մ. Հայկ Պապանճեան կը ծանուցանէ մեզ, թէ անձնական տարուածութեան պատճառաւ բժշկաց խորհրդով յիշեալ թերթին հրատարակութիւնը քիչ մը ժամանակ ետ ձգել հարկադրուած է, և ասոր համար ներդրումները ինքրէն իր բաժանորդներէն:

— Հայէսէն, օգոստոս 25 թուով եկած նամակ մը լուր կուտայ թէ Մեքսիկայի պատերազմին սկիզբէն ի վեր յիշեալ դաւառին մէջ բանակի մշակութիւնը մեծ փութով յառաջ կը տարուի, այնպէս որ այս տարուան բերքը 1885ի բերքը գրեթէ տասնապատիւն է, այն է 4-5000 հալ (պաւեա) որ Եւրոպա պիտի փոխադրուի:

— Ար հաւաստեան թէ մայրաքաղաքիս երեւելի հարուստ բնակիչներէն Պ. Իսախանովն Գալթաճի յոյն սեփականորէն Հելլենական կառավարութեան վրէժատ շերտաւոր թնդանօթ ընծայեր է, և այս թնդանօթները զննու համար Հելլենական կառավարութեան թնդանօթաձիգ դօրաց հրամանատարին 30 հազար Ֆրանք դրօշեր է:

— Աթէնքէն օգոստոս 25 թուով գրուած նամակ մը կը ծանուցանէ, թէ անցեալ շաբթուանը Պէդոպոնտի գաւառին մէջ հեղեղանման անձրևներ ելնելով, բոլոր այգիներն ապականեր և խեղճ այգեգործները յետին յուսահատութեան մէջ ձգեր է, վասն զի Պոնթոսի հաշակաւոր չամիչը՝ որ մեծ առուտուրի նիւթ մ'է, գրեթէ բոլորովին փճացեր է:

— Պաղղիական Մ'օնիթէօն ար 1 տու մէ ըսուած լրագրին մէջ կը կարդանք թէ եւրոպական տեղութեանց բոլոր դօրաց թիւը 3 միլիոնի կը ստանի:

— Անտրպէնի անտրմբեր 1 թուով գրուած նամակ մը կը ծանուցանէ, թէ այս օրերս Միւսմանցի Արաքսով քաղաքին մէջ՝ որ Բրիտանիոյ միացեալ թագաւորութեան ամենէն մոլեռանդ քաղաքներէն մէկն է, Մեքսիկայի Օրմոն ըսուած աղանդաւորներ երևան ելեր են, և թէպէտ կը կարծուի եղեր որ բաղդախնդիր անձինք և կասկածելի կանայք միայն կաշակերտին բաղմունութեան արմուղին, բայց ընդհանրապէս ամենանոցեալ և բազմաթիւ ընտանեաց տէր անձինք սկսեր են յարկ յիշեալ աղանդին:

— Թուրքիոյ մէջ հրատարակուած գաղղիական լրագիր մը կը ծանուցանէ թէ յիշեալ պէտքութեան տարածութիւնն է քսան միլիոն հեքտար, և ունի երկու միլիոն հինգ հարիւր հազար բնակիչ, որոնց մէ երկու միլիոն չորս հարիւր քսանմեկը

հազարը արար և քաղիլ են, 40 հազարը հրեայ, 34 հազարն ալ եւրոպացի:

— Պաղղիական Բաւն լրագրին խմբագիր անուանի Պ. Իսիլ ար Ժիրարօնէն՝ այս օրերս գիրք մը հրատարակեց «Խորհելու իրաւունք» անուանով: Յիշեալ գրքին պարունակած ազգու և նոր ճշմարտութիւնները Պաղղիոյ մէջ հասարակաց կարծիքն ուժգնապէս յուզած ըլլալով, արժան կը համարենք մեր արդոյ ընթերցողաց ծաշակ մը տարու համար յառաջաբանը թարգմանել:

«Խորհելու մատուցալէս շարժիլ է. Մարդ կը խորհի:

Արեւին իրաւունք և պարտականութիւն ունի խորհելու:

Մարդս ազատ է բնաւ չխորհելու. Խորհելու և հետեւաբար խօսելու, գրելու, տպագրելու, վիճելու, ուսուցանելու, գումարուելու և ընկերակցելու հարկը՝ շնչելու հարկին չափ կարեւոր է:

Մարդս չկրնար արդիւնիլ խորհելէ, բայց կրնայ արդիւնիլ խորհածն ըսելէ:

Երգելուէլ այն մարդը՝ որ կուզէ խօսիլ, արդիւնէլ զայն՝ որ գիտէ գրել, արդիւնէլ զայն՝ որ կրնայ տպագրել, վերջապէս արդիւնէլ մարդն իր խելքին կառուութիւնները գործածելէ, անոր խնայական կենացը հարուած մը տալ է, ճիշդ անոր բնական կենացը հարուած տալու պէս: Ճիշդ երբ մարդու մը կարգիլը ի ուտել՝ երբ սնոթի է. խմել՝ երբ ծարաւի է. ննջել՝ երբ քուն ունի. և քայլել՝ երբ անհարթութենէ ձանձրացած է: Մատուցալէս պիտոյքը՝ զգացողն հաւմար բնական պիտոյից չափ ստիպողական է:

Խորհելու իրաւունքն անբաժանելի, անհրաժարելի և անկապտելի է:

Օայն բաժնիքը անգամաւոր է:

Նոյն մարդը՝ որ իր մաքին խորհուրդն յայտնելու ազատութիւն չունի, գրի կամ սարուի է, ճիշդ ինչպէս մարմինը սեղանի վրայ ազատութիւն չունեցող մարդը:

Պաղղիոյ մէջ և ուրիշ տեղեր մարմնական գերութիւնը վերցաւ, մատուցական գերութիւնը գեւե կը կենայ: Մարմնական ազատութիւն չունեցող մարդն ազատ էր, մաքն ազատութիւն չունեցող մարդն ալ նոյնպէս ազատ է. բայց օրինաց լուծը կը կրէ եղբիւր հոգ չէ, եթէ գրի է:

Արշալի բռնական և մարդախանձ օրէնքներ հաստատուեր են՝ սկսեալ այն օրէնքէն՝ որ կը հրամայէր տիեզեր ծնած մանկունքն սպաննել, մինչեւ այն օրէնքը՝ որ մահուամբ կը պատժէր հերետիկոսութիւնը ինչ որ ալ ըլլար նու իրադրծեալ Եստուծոյ անուան:

Քաղաքական բաւարարին ամեն բաւարէն աւելի՝ Օրէնք բառն է որ ամենէն աւելի զեղծման ենթակայ եղած է թեւրեւս. զայն յարգելը բարի է, սակայն պէտք չէ մինչեւ անապաշտութեան հասցընել այն յարգանքը:

Մարդկային ընկերութիւնը չունի օրէնք մը որ մարդու մաքն բղկած չըլլայ, հետեւաբար խորհելու իրաւունքը իրաց բնութենէն չծագող օրէնքներէն աւելի առաջ և գերադրոյն է:

Մոնթէսքիէօ իրաւամբ ըսաւ. «Ես նաստուններն իրենց օրէնքն ունին, մարդն ալ իրենը»:

Մարդուս յատկական օրէնքը խորհիլն է:

Արեւին որ և է դրական, այն է կամահած օրէնք մը պէտք չէ որ արդեւու մարդուն ընել՝ ինչ որ իր էութեան օրէնքը կը հրամայէ իրեն:

Եսով ընկերութիւնը բան մը չկրնայ ներ, և մարդկութիւնն ալ մեծ շահ կրնէ:

Ինչ կայ վախճալու:

Խորհողները որչափ հեռուն հասցնեն խորհելու իրաւանց զեղծումը, այն զեղծումը չկրնար երբեք հաստատուիլ բնաւոր միայնաւոր անհատական իշխանութեանց մէջ ամեն տեղ և ամեն ժամանակ տեսնուած զեղծմանց:

Եսանց խորհելու իրաւունքը լիովին և երկիւղածութեամբ յարգելու, արիւ-

պետական իշխանութիւնները առանց հակառիկ ծանրութիւն մ'են:

Սօկէյ ծագած է կամահած իշխանութեան արեւելութիւններն և անոր ծայրայեղութիւնները՝ որովք պատմութեան էջերն արատաւորեալ են. ասկէջ ծագած են անիրաւ պատերազմներն ու արդար յեղափոխութիւնները. ասկէջ նաեւ ժողովրդոյ վաթթարումն և տեղութեանց անկումը. վերջապէս ասկէջ յառաջ եկած է դիտութեանց և քաղաքակրթութեան յառաջադիմութիւններուն դարերէ ի վեր անդարմանելի յամրութիւնը:

Մի թէ կառավարութիւնները երբեք չլիցայն զարեւուեցան կամ ջնջուեցան՝ իրենցմէ շատեր ժողովրդոյ պատահաւ կամ նախապիք ըլլալուն համար:

Այն ժամանակ խորհող մարդոյ վրայ ծանրացնել համարաշխութիւն մը՝ որ արդող մարդոյ վրայ չհամարանար:

Մի թէ վեհապետ մը՝ որ արքունի դաւադան մ'ունի իր ձեռքը՝ չկրնար զըլորիլ իշխանութեան այնպիսի խտորանց մէջ որոնք անհամեմատ աւելի արեւատար են քան դամենայն խտորանուս ազատութեան, որուն մէջ կրնայ ինչալ մատնաղբիլ մը՝ որ միայն զրիչ մ'ունի իր մատանց մէջ: Եթէ այսպէս է, ինչո՞ւ ուրեմն առաջինն նկատմամբ այնպիսի ներդրումը տուցիւն, իսկ երկրորդին նկատմամբ այնչափ խտութիւն ու անպատահութիւն: Եթէ այն ամեն բաներու գործածութիւնը որովք կրնայ մարդս զեղծանիլ, արդիւնուած ըլլար իրեն, ինչ բան կրնար գործածել մարդ. ո՞չ ապաքէն ամեն բան չարացար գործածած է:

Օեղծումը կիրառութեան հետ անբաժանելի է:

Սեփականութեան զեղծ կիրառութիւնն անգամ օրէնքով վաւերացած է. ինչո՞ւ ուրեմն ազատութեան մինչեւ զեղծանելու աստիճան կիրառութիւնն ալ նոյնպէս չպիտի վաւերանայ: Ինչ է ազատութիւնը, եթէ ոչ ամեն մէկ անհատի համար՝ իր մաքն և մարմնոյն սեփականութիւնը: Ինչէն է ուրեմն այս դաւադանութիւնը. ինչէն է այս խտութիւնը մարդուս իր դոյքը գործածելու և իր անձը գործածելու իրաւանց մէջ:

Եթէ այս երկու տեսակ սեփականութեանց մէկը քան զմեկը գերազանց պէտք է ըլլայ, ո՞չ ապաքէն անձին սեփականութիւնն իրաց սեփականութիւնէն գերազանց ըլլալու էր: Ինչո՞ւ համար ամենէն աղետաբեր զեղծումն ընդունիլ և նուազ փնտասկալ զեղծումն արդիւնէլ: Վաճառու որ և է զեղծումը պէտք չէ ներել, կամ պէտք է ամենն ալ ներել, որպէս զի իրենց մէջ հաւատարմիչն և ուղղութիւն:

Խորհելու իրաւանց հնարաւոր զեղծումը չարադրացնելը այն անդամատութիւնները՝ որոնք զայն իր պրութենէն զրկեցին: Ինչ է զեղծումը՝ ո՞րք մը հետ բաղդատելով:

Միլտոն և Միլտոն ըսին. «Մարդ մը մեղքները բանական արարած մը մեղքներն է, բայց օգտակար գիրք մը խեղդել, նոյն իսկ բանականութիւնն սպաննել է»:

Եսով երկար ժամանակէ ի վեր գործածուած այս խեղդութեանց, երկար ժամանակէ ի վեր կարեւոր համարուած այս ոճրին, երկար ժամանակէ ի վեր տեսած այս բարբարոսութեան դէմ է որ այս գիրքը կուգայ բարձրաձայն բողբոքելու. յաւուն իրաւանց խորհելոյ, զոր իրեն վաւերաւոր անորոշ մ'ըսած է, անորոշ մը՝ որուն դէմ այս գիրքը դաւաճանութիւն մ'ըրած պիտի ըլլայ, և որուն անարժան պիտի ըլլայ՝ եթէ թերի կերպով պահանջէ այն իրաւունքը: Բայց լիովին պիտի պահանջէ:

Եսն բան ըսուեցաւ ի նոյապա կամ ընդդէմ Մամլոյ ազատութեան. բայց բոլոր ըսուածներուն մէջ ճշմարտութեանց և սխալներու խառնուրդ մը կայ, որով հակառակախօսութեան գէղեր մ'եղաւ այն

Ես հակառակախօսութեան գէղեր ուրուն մէջ հեղաշեւէ ինկան ամեն գրիչները, ամեն ճարտարապետները, նոյն իսկ ամենէն երեւելիները, կատարեալպէս կը բացատրէ թէ ինչպէս և ինչո՞ւ մամլոյ ազատութեան խեղիւն՝ այնչափ յաճախ վեճուելէ ետեւ՝ մերթ յառաջ գնաց, մերթ յահանջեց, առանց վերջնական յառաջիկամութիւն մ'ընելու:

Ժամանակը եկած է որ մինչեւ ջայսօր հոյակապ անուանց շուքն տակ անընթացի մնացած այս հակառակութիւնները դատուին: Ժամանակ է որ մարդութեան և ճշմարտութեան մէջ ընտրութիւնը կատարուի: Ժամանակ է որ կան օրինաց անձնի և խոր հեղքէն ելնելու, որոնք իրենց գործին այնպիսի իրաւանց վրայ դարձան են՝ որոնք օրինադրութեան ներքեւ չեն կրնար ինչալ: Միւսը և կամահած օրէնքները՝ Սերջապէս ժամանակ է ծանչելու և ապահովելու մարդկային մաքն անբաժանելութիւնն ու անբաւարարութիւնը իր ամեն յայտարարութեանց մէջ:

Ես գիրքը ուր շատ վիայութիւններ կան, կարգադրութիւններ և անոնքն որ խորհելու հրաւերէն աւելի ընդարձակ և աւելի կամարձակ կերպով հասկցուած էր 18րդ դարուն մէջ՝ քան թէ 19րդ ին, յառաջ՝ քան թէ յետ երեք մեծ յեղափոխութեանց՝ որոնք վերջապէս 1864 թուականը 1789էն ետեւ ձգեցին:

Ես գրքէն և այս յառաջարանէն հանուելիք եղբայրացութիւնն այս է որ թէ՛ կառավարութիւններն և թէ՛ ժողովուրդներն հաւատարմապէս լաւ կրնան այտուհեւ տե թողու գաղափարները որ իրենց բնական ընթացքին հետեւին, որչափ յամրաբայլ կամ բուռն ալ ըլլայ, առանց երբեք բռնութեամբ փութացուելու կամ յամրացնելու:

Ելիչ է որ անսանձ կառավարութիւններ կամ շլիթայալքած ժողովուրդք ըստ իրենց հաճոյից սահման մը դժնի խորհելու իրաւանց, և վճարար բռն անոր:

Սօկէյ անդին չպիտի երթաս:

Ղաղային դատարարութեան ամեն նախաւոր ծիւղին՝ այն է իրական սեռին կրթութեանը համար քանի մը տարիէ ի վեր աղղիս մէջ տեղ տեղ տեսնուած ջանքը իրաւունք և զովութեամբ հռչակելը սիրելի պարագ մը ծանչած ըլլալով միշտ, զոհութեամբ կը հրատարակենք հետեւեալ գեղեցիկ ատենաբանութիւնը զոր Օրթոգիւրի Մետրոպոլիտան և Հովի սիմեան դպրոցներուն վերջին պարգեւաբաշխութեան հանդիսին օրը խօսած է մեծարդոյ Պ. Յ. Ոսկան՝ մեր ուսումնական բարեկամը:

Ես ատենախօսութիւնը քաջալերաւ կան ուղերձ մ'է զկառավարապէս Հովի սիմեան վարժարանի իննամակալ անուան հի տիկնանց, որոնք դատարարութեան կալոսա պղի մը մէջ իրենց սեռին վսեմ պաշտօնը ծանչելով՝ քանի մը տարիէ ի վեր անխնայ ջանիւ և անձնուիրութեամբ յիշեալ վարժարանին զարգացմանը կաշխատին, և այսօրուան օրս իրենց յարաւաւ ջանից յաջող արդեանցը վրայ ուրաւ խանդու և կրնանք բոլոր պարծելու բարեպաշտութիւնն ունին, պարծանք մը որ կը յուսանք՝ ուրիշ թարգմուտ հայ տիկնանց ալ նախանձելի օրինակ մը կըլլայ:

Տեաք իմ եւ Տիկնայք: Եթէ ինձի տրուած հրամանին տեղ՝ անցեալին ծանօթ եւ ապագան կշռող նրբամիտ քաղաքագիտ օտարական մը հրաւեր ընդունէր այս հանդէսիս վրայ իր գիտողութիւնները արդոյ հատարակութեան հաղորդելու, ինչ պիտի գոհունակութեան բացատրութիւններ, որչափ ջերմ խնդակցութիւններ, քանի՞ քանչացմամբ քաջալերութիւններ չպիտի լսէինք արդեօք անոր բերնէն: Ինչ անաւերելալ եւ միանգամայն հրուեցուցիչ տեսարան. արեւելի մէջ, ասկէջ քիչ տարի առաջ ազգայնութեան մէջ թարթալող եւ նիւթական չափով միայն զգածեալ գիղական խորշի բնակիչք իրենց սրդիքը այժմ ուսման կը խրախուսան՝ հրապարակաւ պոսակ կապելով յա-

առջադիրութեան՝ մարդկութեան պատիւը կաւեցընեն՝ տնտեց ոգւոյն մէջ ըստ բարեկամութեան բնական տարրը ծաւալելով, եւ քաղաքակրթութիւնը կը նուիրաբարձրեն՝ դաստիարակութեան մէջ երկուց ուսուցիչ իրաւանց հաւատարմութիւնը ճանաչալով ազգային յարկերու տակ:

Այս, Տեառք իմ եւ Տիկնայք, Ձեր ուշիմ եւ կայտառ ուստերաց, Ձեր լուրջ եւ հանճարեղ գոտերաց ատենանիս մէջ ընծայած տեսարանը սովորական դատողութիւնէ մը դատ բարձր արժէք ունի քաղաքագէտի մը աչքին տուելին: Բայց այս կէտը թողով անորոք մեծանահապետի ինքն մեր սրտին առաւելին զգացմանց համեմատ խորհրդածելով՝ նախ ապացուցանել դատարարականութեան կարեւորութիւնը որ արդէն իսկ կ'զգանք, եւ յետոյ մեր դպրոցական դատարարականութեան վրայ փոքրիկ ակնարկութիւն մ'ընել:

Մարդս ընկերակցութեան է: Ընկերութիւնը օրէնք մը կ'ենթարկէ: Եւ որովհետեւ չկրնար ըլլալ օրէնք առանց փորձառութեան, առանց ուսման, կը հետեւի ուրիշ մը թէ ուսումը այնպիսի բնական պէտք մ'է՛: Բնական էակաց ընկերութեան՝ ինչպէս լոյսը աչքի եւ հացը ըստամուրի: Բացառութիւնք:

Բնութիւնը ոչ գաղափար կրնայ կենալ եւ ոչ անգործ: Երկիր մը անուշակ միտուն համար անբեր չէ: Եւ ոչ իսկ անբնակ: Ընդհակառակն վայրի մոլորտոտը, փուշ, մացառ եւ անտառ այնպէս խիտառ խիտ կը բուսնին որ կարծես թէ անտաճան վայրեր իրենց համար նեղ են, իրարու կը սլուլուն իրար կը խղզեն: Այս վայրի տեղութեանքն ունին իրենց համեմատ վարարք բնակիչներ, գիշատիչ գաղաններ, թիւնաւոր զիւռններ, վայրի երէններ, խառնահաղանձ բաղմամբով մը որ մեր մտքին ամենէն քառմենիկ սրտերը կընծայէ: Անկարելի կը թուի որ հոն մարդկային էակ մը կարնայ ապրիլ: Բայց ընտելութիւն իբրեւ իրականաց հաւատարմութեան նախաձեռնող իր՝ անմշակ բուսոց եւ կենդանեաց հետ դրած է հոն անուշակ մարդի ալ: Այո, հոն է մինչեւ ցայսօր մարդկութեան ծառի վայրի բունը, որ որովայնի պէտքէ ու անձին ապահովութիւնէն դատ օրէնք մը չունենալով՝ նուիրաբարձ ասպակնեալ կիշիւն վայրենութեան վրայ, եւ իբրեւ բնական իրաւոր մ'ի նմանին մարմնովը կը ճարակի: Եւ ան վայրենի մարդկութիւնը: Երբեք զանի ճարտարութիւն:

Բայց այս յետին աստիճանի նուազութեան հետեւ մինչեւ որ աստիճանի բարձրութեան հասնելու ընդունակ կրնանք համարել զինքը կամ ինչ վիճակի մէջ կը տեսնանք զինքը այսօր: Եւ ան առ ասկան եօթմասնական դարերու պատմութեան առարկան, որուն ուրուագիծն իսկ տալը անկարելի կը թուի ինչ համառօտ տեսութեան մէջ: Բայց հանդուրժեցէք, Տեառք իմ եւ Տիկնայք, որ իրրեւ ընդդիմադատներ մը՝ զրաւեմ ձեր երեւակայութիւնն այնպիսի անձի մը վրայ որ այս անցեալին իրելի հմուտութիւնն ունենայ, եւ քաղաքական բարձր գիրքին մէջ, յորում կենթադրեալ զինքը, զիրթ թէ անկրթ չեղանակութեան մարդկային այնպիսի ուղղութիւն մը տպաւորէ, որ ապագային մէջ մարդկութեան օգտակարագոյն ըլլայ: Եւ այնպիսի անձ մը որուն հոգին բարոյականութեան տարրով միայն կարենայ ապրիլ, եւ որուն սիրտը պատուով, ընտանեաց եւ մարդկութեան սիրտը բարձր, միով բանիւ այնպիսի անձ մը որուն համար առաքելութիւնը ընտանեացն եղած ըլլայ: Եւ ան ոչ հանդիսականք, քաղաքականացեալ մարդկութիւնը: Ի ցանկալի էակ, դու իմ երեւակայութեան մէջ միշտ բարձրագոյն աստիճանի պիտի ունենաս: Բայց ինչ թէ այդ անձիկ սահմանը քեզի բաւական չհասնալով՝ ամբողջ երկրագունդիս վրայ ըզքեղ մարմնացեալ տեսնալի:

Հիմա, մարդկութեան շառաւիղին այս մերկու հակառակ ծայրերը ըմբռնելէս ետքը, հարցընենք մենք մեզի թէ մը միջին կէտին վրայ կը գտնուինք: Յիշատի այս քննութիւնը շատ հետեւոր բարդակ է եւ միանգամայն ամենակարեւոր մեր այժմու կայսրութիւնը մեզի ապահովապէս ծանուցանելու համար: Անտառակոյտ անտաճան հետեւ ենք վայրենութենէն քանի որ կրնանք, օրէնք եւ դպրութիւն ունենանք: Եւ քաղաքական կենաց բարիքը կը վաշտակենք, յորում մենք իսկ ենք: Անշուշտ մեր այժմու կայսրութիւնը շատ զփուստութեան կենթարկէ, որ յաղթուած են: Ինչ փորձառութիւններ եւ մարդկութեան օգտակար ըլլալու համար անհնուէր ճգնաժամ, մեծ փառք միայն ասոր մէջ, բայց մենք արդիւնք ժառանգելու իրաւունքն ունինք, պատելը նախնեացն է: Եւ իրաց այս վիճակին մէջ վայրենութեան հետեւ ըլլալովին՝ իրաւունք մը չենք

կրնար ստանալ քաղաքականութեան մէջ ինքզինքնիս յառաջացած կարծեալ, եւ յառաջ արդիւնք մը չունենանք յօդուս յետոյ: Եւ ներքեւ արդեօք այսպիսի օգուտ մը: Եւ անհնաք: Մարդկութեան նիւթական կեանքն արդէն հասնիքի մը նմանցուցած են որ միշտ կը հեղու: Եւ ներքեւ ինչ ըսել թէ բնական կեանքն ալ նոյն վիճակին մէջն է: Եւ անոր համար ալ կենալ ըսելը ապականիւ ըսել է: Ինչպէս ընծայեալ ջուրը: Մենք ընդհանուրէն եթէ մասնաւորի վերածենք մեր դադաւարը, կը տեսնենք որ մեր փոքրիկ աղբի ալ նոյն կարեւոր կենթադրեալ եղած է ինչ որ ընդհանուր մարդկութիւնը: Եւ երբեմն իրողատարած արշաւած է եւ երբեմն ընթացքէն չեղած եւ այլ եւ այլ կողմ ծանծաղած, եւ որուն մի մասն է մայրաքաղաքիս հայ դադակնութիւնը զոր նրկային յատուկ անտեսութիւն մը բոլորովն ապականիւ զերծ ուցեր է: Եւ անոնք արդէն անցնելէն ետքը կը նշմարուի անոր վրայ միտում մը դէպ ի իւր բնական ջրանցքը, եւ ինչ մը միւս մասանց ալ նոյն շարժումը տպաւորելու որով միայն կարելի է աղբային աղբեր հոսանքը վերակենդանացնել:

Երբայ այս վիճակը ընդհանրապէս գտնելի է եւ կրնայ քաջալերել զմեզ դէպ ի լոյսը դիմելու, որով արժանաւոր ծառայութիւն մ'ըրած կրնանք ըլլալ յետոյ: Բայց ոչ թէ արդէն իսկ զմեզ մեր նախնիքը քառահեղու ճարտարութեամբ կարծելու: Այս տղայական սրնայարժեքութիւնը՝ որ զբարձրագոյն աղբային շահերը կարծես թէ պղտորելու համար միայն կը յուզէ, փորձառութեան թերութիւնէն առաջ եկած յանդիմութիւն մ'է: Եւ անից մեր որդիքը՝ որոց վրայ հիմնաւ է աղբին ապագայ բարօրութեան յոյսը ուրիշ կերպով չենք կրնար ազատել, բայց միայն այնպիսի դատարարականութեամբ մը՝ որ բուն աղբային ըլլայ: Կողմնակալութիւն, այնպիսի դատարարականութեամբ մը՝ որ մեր յատուկ կրօնական, բարոյական եւ զրաւեան սկզբանց վրայ հիմնաւ ըլլայ, եւ օտար դադաւարները, որչափ եւ պայծառ ըլլան, որչափ եւ օգտակար երեւան՝ զոռն ընտրութեամբ մ'ուս ունենան իբրեւ դարմաստար եւ ոչ իբրեւ էական մասն:

Այս օրինակով դատարարականութեան ամենակարեւոր խնդիրը՝ որուն իրաւոյտ տալու համար զձեզ հոս համախմբեալ կը տեսնեմ, ոչ Տեառք իմ եւ Տիկնայք, խորհրդածութեան ծանրակշիռ արժէք ունի: Եւ անհաւանք որ ի մօտայ ձեր ամենասիրելի ուստերաց եւ դատարաց հետ վերաբերութիւն ունի եւ անտոյժով աղբին ընդհանրութեանը հետ: Բայց ձեր երկարամտութեամբը չզրեղմանելու եւ իմ սահմանէս չհեղու համար, ներքեցէք որ ձեր մանկանց դատարարականութեան կրօնական մասին վրայ ձեռնահաս իշխանութեան վկայութեամբ ըրած բացարձակապէս բաւական համարիմ զձեզ լիովին գոհ եւ ապահով ընելու: Եւ մասին դայթակրութեան, ինչպէս նաեւ անհանդուրժեալ հետքն անգամ մեր սեմէն դուրս է: Եւ անպէս ուսումնական մասին վրայ չենք աղբայնոց անաչառ վկայութեանը դիմելով: Եւ անպէս ճշտապէս իրաւութիւնը ի շնորհս խնդրելու հանդիմութեան, ձեր երկու դպրոցներուն մէջն ալ շօտախական կերպով ըզգալի է: Եւ անպէս եւ անպէս ձեր մանկանց համար բնական եղած է, եւ արդէն իսկ երկու սեւի վարժարաններն ալ տարւոյս ընթացքին մէջ իրենց երակայութիւնը կը մատուցանեն արդոյ հասարակութիւն: Եւ արտ մ'է որ կը խոստանայ ձեզ ապահովապէս տարուէ տարի ակնկալեալ արդիւնք տալ՝ միայն թէ « անհաւաքութեան ջանքը օժանդակութիւնը չըլլայ ուրիշ »: Եւ անպէս հարկ է որ ուսանողը յարասեւն իրենց ընթացքը մինչեւ ի կարեւոր կատարելութիւն, եւ զիւրիս բնականութեն իւրաքանչիւր անհատ իրեն վիճակին ներած ձեռնառութիւնը չընդհատել յօժարակամ նուիրել: Եւ միայն դատարարականութեան բարոյական մասը՝ որուն վրայ կողմն համառօտաբար բովանդակել իմ գիտողութիւններս:

Տեառք իմ եւ Տիկնայք: Եւ անպէս յանգ հանգ բաւական երկ արժանալի փորձառութեամբ եւ վրայ զձեզ վստահացնելու թէ ձեզմէ շատերը ինքնին նշմարած չըլլային որ նախ ձեր արու դաւաններուն ոգւոյն մէջ աղբայնեանց ասոր մը կը բարդաւաճի քանի որ կուտանին:

Եւ շատերը գիտեմ որ ուսան, որ թէ անոնց հետ բարձրագոյն սա տարբերութիւնը նշմարելի է, որ անոնք աւելի անձանց օգտուելու համար ուսան: Եւ անոր անձանց հետ մէկ տեղ աղբին ալ պիտանի ըլլալը իրենց որոշ նպատակ ունին: Չենք վիճել որ անոնք իրենց հասակին եւ միջոցներուն ասիկապարտութենէն: Եւ համարուած ըլլալով որ դաւաթ մը ջուրն ալ կրնայ իր արժէքը ունենալ, սի-

րով կ'օգնեն իրենց փոքրագոյն ընկերներուն եւ կը յարկեն իրենց մէջ տեսութեան շնորհիւր ասպնջականութեան դատող պանդուխտները եւ օտար թաղեցիները: Գիտնալով որ ուսուցողին պարտքն է չունեցողին տալ ընկերական կապով միացեալ դանձիկին, գիտութիւններն, եւ որ գիտելին է իրենց համար՝ հանդիմութիւններն ինքնապարզութեամբ նուիրեն այն աղբայնոց կրթութեանը որոնք զբարձրագոյն նախալքութեամբ անգամ զուրկ մնացած են: Միով բանիւ, հայ անուան երանգով եւ եղբայր անուան քաղցրութեամբ զգածեալ աղբին օգտակար եւ իւրիւր պատիւ բերող անհասանքը ըլլալ կը խոստանան:

Իսկ թէ նոյն ակնարկութիւնը ներքեւ ինչ ընել է գ սեռի յատկացեալ վարժարանին վրայ, ինչ մեծ միւլթարութիւն, ինչպիսի դմայական քաղցրութիւն, եղբայր, Դաւախնաւութիւնը հոն, հոն կը պատրաստեալ զիս համար մօտաւոր ապագայի մը խնդարից օրերու սկզբնաւորութիւնը: Եւ անոնք եւ խիտ շատ անգամ՝ աղբի, սիրոյ եւ միաբանութեան խօսքեր, երբեք հանգիստ տեսնելու եւ լեցնելու: Բայց ոչ արդեօք այս եռապատկեր սքանչելի բանս այնպէս վայելուչ կերպով կերպարանեալ կրնայ տեսնալ քան թէ սա խոսքի յարկին առկա նորաբանութեամբ կեղեցիկ սեռի ոգւոյն մէջ: Բայց քօղքը կեղեցիկութեան բնական դարձն է, եւ մեզ ներքեւն է պատկառանք միայն ակնարկել աղբ քօղարկեալ բաժանչեկաց, որ սահմանեալ է ըլլալ աղբիս խորհրդաւոր աղբիւր վերակենդանութեան:

Մնացեալը հետեւեալ թուով:

Լուրդոյտ արդոյ ընթերցողաց փորձով յայտնի է որ մեր խմբագրական պաշտօնին մէջ գրեթէ բնաւ կարեւորութիւն չենք տար տեղական այնպիսի դէպքերու՝ որոնք ընդհանուրին վերաբերութիւն մը չունին կամ եթէ կրնանք ըսել, անհշտ կամ մասնաւոր դէպքերու՝ իրենց բուն արժէքէն աւելի կարեւորութիւն չենք ուզել ընծալու, զոչ շատով մանաւանդ կողմնակցութեանց բերան կամ դորձեք ըլլալէ եւ կ'ըլլէ զրոգելէ, որով շատ անգամ այն անհշտ կամ տեղական մանր վէճեր տալու պայման մեծնալով անկողմնակցի կողմէն կը փոխուի: Ուստի եթէ երբեք տեղական դէպքի մը վրայ խօսք ընենք, այն ալ միշտ խաղաղասիրական ոգւով կամ սխալ եւ փաստակար կարծիք մ'ուղղելու դիմամբ է միայն:

Այս նպատակաւ էր որ մեր 653 եւրոք թուով Սամաթիոյ թաղին մէջ անցեալներէն հաշիւներու ընտելութեան մը տարած ծագած զբարձր անհամաձայնութեան ի սպառ վերջ տալու համար արդային Քաղաքական Ժողովը ըրած մէկ սնորհութեան իշխած ժամանակին, արժան համարել է ինք Սիւրիա հանդէսին նոյն թաղին նկատմամբ « արմուկ մը կայ որ դու կը շարունակուի » եւ ուր չկայ պատիւ, հոն չկայ օրէնք » ըսած խօսքերուն առաջինին սխալ, եւ երկրորդին ալ մեր աղբին նկատմամբ անտեղի ըլլալուն վրայ համառօտ դիտողութիւն մ'ընել: Սիւրիա հանդէսն իր անցեալ 344-րդ թուով երկար յօդուած մը գրել է մեր վերջինեալ գիտողութեանց դէմ:

Եւ անց փաստի առարկութիւն մը հաւանական կամ ճշմարիտ չկրնար ըլլալ միշտ: Բայց ամեն փաստ ալ ընդունելի չկրնար ըլլալ:

Սիւրիա ալ փաստերով խօսելու ուզել է, եւ փաստերուն պակաս տեղը թշնամանոց դիմել է: Սիւրիա թաղին մէջ « արմուկ մը դու կը շարունակուի » ըսելը հաստատուելու տեղ՝ կիսաընտել թէ թաղին մէջն ունի հաշիւ պահանջներուն պատճառով կը խնդրեն աղբային Սարճութեան, եւ կը յաւելու թէ « առանց ասոնց լուծուելուն, Սամաթիոյ չկրնար արմուկէ աղատել, ոչ ալ օրինաւորութիւն հաստատուել հոն մինչեւ որ քանի մ'անձնիք չարտօնուին »:

Ի սեւ թէ թէ պատճառական փոխաւրնութիւն մ'է աղբային Սարճութեան խնդրութեամբ, այն ալ խնդրագրով մը՝ ըսել է խաղաղութեամբ եւ ոչ արմուկով: Ներկայից, կը յաւելու թէ « արմուկին պատճառ եղող հաշուայ խնդիրը դու

վերջացած չէ »

— Այս պատասխաններ: Եւ արմուկ հաշուական խնդիր ծագած չէ, այլ քանի մը համարառու անձանց առ ժամանակեայ թաղական խորհրդոյ անգամ անուանելէն ծագած էր, այն ալ հիմա վերջացած է: Եւ անուար « արմուկ չշարունակուի » իսկ հաշուական խնդիրն ալ խաղաղութեամբ լուծուելու պիտի է:

Ներքոյ « պատուաւոր անձանց դէմ եղած անարդանքը դու պատճառած չէ » կրտ Սիւրիա:

— Սենք ալ կրնանք թէ պատճառական փոխարնութիւն մ'է խնդրութեամբ եւ « արմուկ չշարունակուի »:

Չորրորդ, ըստ Սիւրիոյ « ամբողջ թաղը ապօրինաւորութեան մէջ է եղեր, սահմանադրական արամադրութեան զուրկ »:

Եւ որ ալ կը պատասխանենք թէ քանի որ նորակալմ Քաղաքական Ժողովը Սամաթիոյ մէջ թաղական խնդրութիւն մը հաստատեց առ ժամանակեայ խորհրդական ընտրելով չորս պատուաւոր եւ թաղեցւոյ փաստահոլութեան արժանի անձնիք, որոնք օգտուած էն ի վեր՝ իբրեւ բուն թաղական խորհուրդ՝ կրցածնուն չափ դպրոցը կը նային, եկեղեցին պայծառ կը պահեն, ընտանեկան վէճերը կը կարգադրեն, անանկները կը խնամեն, այն օրէն ի վեր ոչ աղմուկ մնացած է թաղին մէջ, եւ ոչ ալ ամբողջ թաղն ապօրինաւորութեան կամ անխնայութեան մէջ կրնայ համարուի:

Ներքոյ « անոր թաղական խորհրդոյ թուականութիւնը դու կեցած է » կրտ Սիւրիա:

— Այս ալ « արմուկին շարունակութիւն » չհաստատուի: Ըստ որում քուէարկութիւնը հաշուական խնդրոյ լուծմանը կ'սպասէ եւ ոչ աղմուկի դադարման:

Ինչպէս կը տեսնուի, Սիւրիոյ մէջ բերած փաստերուն ամենն ալ հաշուայ եւ պատճոյ փոխարնութեան խնդիր կապալուցանեն, եւ արմուկ ըսածն ալ հաշուայ եւ պատճոյ փոխարնութեամբ պահանջման խնդիր մ'է միայն, եւ այն ալ Սարճութեան լուծմանը ներկայացած: Ուրեմն Սիւրիա կամ արմուկ բառին նշանակութիւնը չգիտեր, կամ կաճողիկ տեսնելով « կրակ կայ » պոռագոյններէն է, եւ կամ նորէն արմուկ արժարծելութեամբ լուծած է միամտաբար:

Սիւրիայի մէջ բերած փաստերուն ոյժն ու էութիւնը մի առ մի բացատրելէ ետեւ, հարկ կը համարենք սա ալ աւելցնել, որ թէ՛ աղբի մը լուծութեան, թէ՛ դաւառի մը եւ թէ՛ թաղի մը մէջ՝ ուր որ արմուկ կ'ենի, պէտք է գիտնալ որ այն տեղի խնայնութիւնը կամ անգործ է, կամ նոյն արմուկին արժարժման մասնակից: Եւ անոնց ասոնց ժողովուրդը ոչ արմուկ կը հանէ եւ ոչ ալ հանածը կը շարունակէ: Եւ ասոր փորձերը մեր աղբին վրայ ալ կրնանք տեսնել, եթէ դիտենք: Չմոռնալով ըսելու թէ խնայնութեան մը գործութիւնը կառավարողին իմաստութեան աստիճանէն կը չափուի: Ուրեմն իբրեւ սկզբունք՝ ամեն թաղերու կամ դաւառներու նկատմամբ կրնանք, թէ ուր որ խոհական խնայնութիւն մը կայ, հոն հասարակաց անդրորութիւն կը տիրէ, եւ ուր արմուկ կայ, հոն անգործ կամ անխոհ հոն խնայնութիւն մը եւ կամ խնայնաց թեւադրութիւն կայ:

Արժենք թէ Սիւրիա ալ կրնալունի այս սկզբունքը: Եւ եթէ չընդունիր, կուզենք որ հակառակը հաստատուի, որպէս զի պատիւր յանգաւորը կրէ եւ ոչ անմեղը: Եւ անմեղը շատ անգամ յանգաւոր կար, ծուածներն ուրիշ թեւադրեալ են, ինչպէս որ նոյն իսկ Սիւրիա « արմուկ դու կը շարունակէ » ըսելու շուտ յօժարութիւն չէր ունենար, եթէ մէկ քանի աղի միւսերէ թեւադրութեամբ չըլլար: Բայց եւ այնպէս ըսեալի մը տնօրէնին պարտքն է՝ եթէ սկզբունք ունի, բոլոր լուծուելու ի մնացածն իր սկզբանց բովին մէջ գտնել, եւ այնուհետեւ հաստատականութեան ձեռնարկել: Եթէ Սիւրիա ալ այսպէս ըրած ըլլար, անշուշտ չափով համարձակէր

«արմուկին շարունակութիւնը» արդեւոր
ազգային Վարչութիւնն ուղղակի անցոր
կամ արմուկին թերադրել կատարեալ
լու :

Թող Արեւիկա կոնկրետ պատուէ և
անցեալ դէպքերով իր թերթը խնդրէ .
բայց մենք «ուր պատիւ չկայ հոն օրէնք
այ չկայ» ըսած «խնայողութեան» առաջինը
կատարմը մեր ըրած դիտողութեան վրայ
գրածն ալ համառօտիւ իրեն կը ներկայա-
ցնենք, և կը խրատենք զինքը որ ուրիշ
անգամ երբ բան մը գրեալ է ինչ-
նախ աչքէ անցնել, սրբաբար, բաւերուն ի-
մասն հասկընայ և ապա հրատարակէ :

Եւս իր գրածը .
« Ուր պատիւ չկայ, հոն օրէնք ալ
չկայ » մեր այս խօսքը նշանակելուն նը-
պատար Մասին (սխալ) դատել ուղեղով
կը հետեցնենք որ իբր թէ մենք ըսել ու-
ղած ըլլանք Ազգին համար թէ, քանի որ
Սահմանադրութիւնը պատճառաւ մաս-
նուէր, և ազգն ալ Սահմանադրութեան
դատ օրէնք չունի, « ուրեմն չայ ազգը
ներքինացէս ապօրինաւորութեան և անիշ-
խանութեան մէջ է » : Արեւիկա մեր այս
բնական հետեւութիւնը (սխալ) ենթադ-
րելէ ետեւ, քիչ մը վարը կը յաւելու թէ
«մեր այս խօսքը նշանակելուն նպատակը
հասկընելն էր թէ պատճառաւ գործա-
դրութիւն չտեսնուիր ազգին մէջ, որով
ազգային օրէնքն ալ անգործաբար կը
մնայ դանդաղ դէպքերու մէջ, և Պատրի-
արքանի յարգն կորուսելով անգործնա-
ւորութիւն և անիշխանութիւն կը յա-
ջորդեն » :

Արեւիկան մեր համաձայնեցութիւնը
(սխալ) անուանելէ ետեւ իր նպատակն ալ
նոյնը ըսել ըլլալը ինչպէս որ կը տեսնուի
սլարգմութեամբ խոստովանելու է . որով
մեր հետեւութեան ընծայած (անհեթեթ,
ծուռ ումուռ) և այն անպատեհները ինք
իրեն վերնածախս և հետեւապէս մեր
կարեկցութեան արժանի եղած է : Ուս-
տի մենք ալ մարդասիրաբար կը խրատենք
զինքը, որ այսպիսի փափուկ խնդիրներու
մէջ նետուելէ առաջ՝ քիչ մը խորհիւ և
խորհածը արամբանել սովորի . և մանա-
ւանդ եթէ ուրիշ անգամ դէպք մը համար
օրէնքի դէմէ ըսելու ըլլայ, օրէնքին յօդ-
ուածն ալ նշանակէ, որպէս զի ամեն մարդ
խմանայ որ օրէնքի դէմ ըլլալը :

ԵՄՈՒՅՄ ՈՒՆԻ

ԱՌՁԵՆՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԵՄՍՏ

Տղայոց սորվելու յարմարեալ և շատ
պատկերներով դարդարեալ

Եւս աշխարհագրութիւնը որ 1861ին
տպուած և 10 դուրուշ կը ծախուէր,
ամենուն դիւրամտօղելի ըլլալու համար
զինք 5 դուրուշ ինքնաձեռն կը ծախուի
Սահմանադրութեան զարգացման Պ. Յով-
սէփ Պապիկեանի խնամքով :

Սօսիէ Պրիմ, Վ. Կենտկոյ Միւ-
թարեան հարց Պէյօղու Սաղա-Շա-
ճի թիւ 34 դպրոցին գաղղկացի վարժա-
պետը, նոյն դպրոցին մէջ գաղղկաբէն
ընդունի դաստիարակութիւն մը սկսիւ
13/1 հոկտ. 1864 չնոյն ընդունի մէջ գաղ-
ղկաբէն ընդունի հայ ազգին պատանեաց հա-
մար :

Շարքի երեք օր, այսինքն երկու-
շաբթի, չորեքշաբթի և ուրբաթ, ժամը
երեկոյեան 11էն մինչև 12/2 : Ընտանի
զինք 50 դուրուշ :

Ուղղը կրնայ զինքը տեսնել նոյն դըպ-
րոցին մէջ ամեն օր առաւօտէն մինչև կէս
օր :

Մ Ե Ծ

ՎԻՃԱԿԱՆԱՆՈՒԹԻՒՆ

Ա Ռ Ս Տ Ր Ո Յ

Պրիմ կատարուի յառաջիկայ հոկ-
տեմբեր 1ին 1864 : Ը. վատարեալ թուոյն
դուրմար 200 000 Ֆիլորին է. միւս վատար-
կած՝ դուրմարներն են 50 000, 15 000 և
10 000 Ֆիլորին :

Վ. Կենտկոյ հանութեան ստանալներն
ամեն մէկը 15 ական Ֆիլորին են և կը ծախ-
ւին լոպրոյս դրամներով :

Եւս թիւերը լոպրոյս միջոցաւ պի-
տի հրատարակուին :

Եւս զոյգ վերջին (1864) արուեստա-
հանդէսին մէջ առաջին կարգի պատուոյ
միտալ ստացող, բանալի կուտէն դատե-
լու գործիչն Ս. Ս. Միստանիս Ե.
մերիկայի մարզան կը ծախուի հինգ ա.

ժանգոնով . դործածելը խիստ դիւրին է .
ձեռքով կը դարձուի ու շատ բան յա-
ռաջ կը բերէ :

Եւս մերիկայի մարզան նոր տեսակ օճառ
(սպոն) մ'եկած է որ ամեն ջուրով կը
փրկուի : Օգտակարութեան մասին փոք-
նոյն կը վկայէ . փորձի համար ուղղը
կրնայ խալիկ մը ծախու առնել :

Եւս ձեռնակ շապկեղ, տիւր ու
քաղք, նաև ամբիջա կտաւ կը ծախուի
Վարչութիւն Եւս մերիկայի մարզան :

ՆՈՒՄԱՐԱՆԵՐ

(Կ Ի Տ-Ա Ք Ո Ռ)

Նուադայարդարը երոժշտական ներ-
դաշնակութեան համար նոյն բանն է՝ ինչ
որ է անկիւնաչափ և կարկինը երկրա-
չափութեան համար : Եւս գործիք մ'է
որով ամեն մարդ կարող կըլլայ դաշնակը
(բիւնո) ճշգիւ յարգարեւ (աշէնկէ մէք) :
Եւս զփարպիկ օգնութեան կրնայ
գործածուիլ, և նուադայարդար ալ ընա-
կնաւ չպատճառէր : Գին 35 Ֆրանք :

Սը գտնուի Ռեյսի մէջ փողոցի թիւ
485 Պ. Մեթիսի վաճառատներ :

Քէնքինայի գինին կազդուրիչ դորու-
րութիւնը մօտ ատեններս առաւել հաստատ-
ւեցաւ իւր գործադրութեան անթիւ փորձե-
րով . ստամոքսը ասոր ազդեցութեան ներ-
քեւ կը կենդանանայ, և կենսական ջրմու-
թիւնը մարտդական գործարաններէն կը ծա-
ւալի բոլոր միւս գործարաններուն, բազի-
րակները աւելի դորուր կը նետեն, և թէ
զգայական և թէ իմացական կարողութիւնը
սխալեալ իրենց կատարեալ գործողութեանը
կը բարձրանան, արեան շրտեղութիւնը նոյնա-
տէ, և ջրային դուրիւնը թէ որ վերադը-
ղուեալ ըլլայ, վերադըլ կը համաձայնի միւս
գործարանաց բնական արամադրութեանը .
անս ասոնցմով Քէնքինայի գինին բոլորովին
կը տարբերի միւս կազդուրիչ գեղերէն, բայց
իւր պատրաստութեանը մասին այնպիսի գի-
տողութիւններ կան, որ ասոնց ասոնց անհը-
նար է որ գինին վերոգրեալ յատկութիւնները
ունենայ . թէ որ Քէնքինայի գինին հետ
պարզապէս խառնուի, երկուքն ալ իրենց ո-
րակութիւնը կը փոխեն ու մէկ դերու մը կը
զոյսնայ, որ փորձով զիջողութեան է ընդորովին
գինին և Քէնքինայի աղիւ մասունքներէն
բազիկացեալ ըլլալը . որով ոչ միայն գինի-

ին բազիկացեալութիւնը կը փոխուի, այլ և Քէն-
քինային բազիկական մասունքը՝ մեծաւ մա-
սամբ կորսուած կը համարուի : Ասոր դէմը
առնելու համար սովորութիւն կը գինոյ
ողի (սքիթ) խառնելու . բայց ձգենք միջո-
ցին անկատարութիւնը, այսպիսի խառնուրդ
մը շատ անգամ յաւէտ մնալ կը պատճառէ
տկար ստամոքսներուն քան թէ օգուտ . այս
տեղաւերդը կը համարենք այսպիսի փոփո-
խութեան մը պատճառաբանութեանց վրայ
խօսիլ որ բոլորովին ընայունական խնդիր
մ'է, այսպիսի կըսենք որ տեսակին աղիւնու-
թիւնը կրնայ ճանչցուիլ յետագայ քանի մը
նշաններէն :

Քէնքինայի գինին ճերմկած, կտրած կամ
քաղցած ըլլալու է . պէտք է որ կարմիր գի-
նիով պատրաստուած ըլլայ, ըստ որում իւր
բազիկական դորութիւնը նախապատիւ սեպ-
ւած է միւսներէն . միայն թէ գործածող անձը
այնպիսի հիւանդութիւն չունենայ որուն եր-
կաթ ընդունիլ չյարմարի . անորոշելի ինդ-
ուութիւն մ'ունենալու է, որ խմելէն վերջը
քնաց վրայ կ'ծու և անախորժ դառնութեան
զգացում մը պատճառելու է . ասոնք արտա-
քին նշաններ են, որոնցմով քիչ շատ կրնայ
նշմարուիլ աղիւ կամ գէշ պատրաստուած ըլ-
լալը . թէպէտ այնպիսի կեղծ նմանութիւն
ներ կրնայ ըլլալ իւր պատրաստութեան մէջ
թէ գինին և թէ Քէնքինային տեսակին կող-
մանէ, որ հմուտ չեղողներուն դժուար կ'ըլլայ
որոշելը :

Ասոնքնկա տեղով մերազգի ճարտար դե-
ղագործ Պէյլիկ ճեան Մարգար աղան որ այս
գինին պատրաստութեանը մասին բաւական
համաւստացած և մայրաքաղաքի երեւելի
բժիշկներուն և հասարակութեան վստահու-
թիւնը գրաւած է, կը փութայ ծանուցանել,
որ իւր շինած Քէնքինայի գինին կը ծախուի
Պաղլէ-Վափու իւր գեղարաններէն 14 :

Գաղղիոյ (Փրի-Պոստ) կոչուած գինիով
պատրաստուած գինը 13 դուրուշ է մէկ սըր-
ւակը : Ասիկա ի դատ ուղղութեան որ և ինչ
տեսակ գինիէ նաև կրնան գտնուի, որոնց գի-
նը տեսակին համեմատ տարբեր է :

ՁԱՆԻ ԻՊ

ԲՈՒՐՈՐՈՎ ԻՆ ՄԱՔՐՈՒՄ

ԱՌՈՐԱՆՈՒՆ ԵՒ ՔԱՂՏԱՆԱՍ

Ուրիշ ամեն ձեան իւրերուն մէջ այս
միայն չունի ձեան հոտ և համ : Եւս
նիւ գեղագործին գտած միջոցով պատ-
րաստուած :

Սը գտնուի Ռեյսի Տէլա Ս. տայի
դեղարանը :

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

ԴՐԱՄՈՑ ԱՐՃՈՂՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼԻՍ	Բ. 2.	Գ. 2.	Դ. 2.	Ե. 2.	Ուր.	Շար.
Յ ՍԵՊՏԵՄԲԵՐ	1.	2.	3.	4.	5.	6.
Օսմանեան իրա Մէք.	10 1-20	10 1-20	10 1-20	10 1-20	10 1-20	10 1-20
Բանանոց արծաթ .	68-28	68-28	68-28	68-28	68-28	68-28
Թահլ. Միւթի աղէ .	56-33	56-33	56-33	56-33	56-33	56-33
Էսհամը ձէտիտէ հին .	56-33	56-33	56-33	56-33	56-33	56-33
« « « « « « « « « «	56-33	56-33	56-33	56-33	56-33	56-33
Աղիկի ստակով	56-28	56-28	56-28	56-28	56-28	56-28
« խօսքով	58-28	58-28	58-28	58-28	58-28	58-28

ԱՐՄՏԻՔ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ Յ ՍԵՊՏԵՄԲԵՐ

Ցորեն թայղան .	—	Ցորեն խմայիլ կակուղ .	—
» խմայիլ .	20-25	» վարնա .	22-25
» կալաց .	—24	» Պուրդալ .	22-20
» Բուժիլի Պալլը .	—	» Պալլը .	20-21
» Սամսոն .	—	» Եղիպատցորեն կակուղ .	—
» Աղիլ կակուղ .	—	» խալալիլ .	—
» խալալիլ .	48-20	» Գարի .	8

ՆԵՐՔԻՆ ԲԵՐՔ

Գլատը (Մաղը) սեւ .	400 լրա	—18
» ձերմակ .	—	—14
Ինչին հատիկ (ձէնիլ) Էնիլիլի .	400 լրա	—15
Խորդ Գըրըմ կէս լրա .	հօխա	—6
Շիլուաղուած 400 լրա	—	—5
Տաճկաստանի 400 լրա	հօխ	—9
Բամպակ Պարսկաստանի և Վրաստանի հօխ .	—	—20
Ասոր. կիպրոս. Ասանա .	հօխա	—25
Թիֆլիսի լիւրիլի Զանիլը .	400 լրա	—58
Միլիոն Պալլը .	—	—225
Բիթրէ Տերեւ բանուած «	—	—24
» « « « « « « « « « «	—	—
Մեղրամոմ գեղին Տրապիզոն .	400 լրա	—28
» « « « « « « « « « «	—	—26

Սուսամ Բուժիլի	հօխա	—
Կաւաւի հոտ (Քէլէն թոյն) Բու .	Քիւ .	—
» Պանարմա .	»	—
Ձէթ (Ձէլին կաղը) Ս. յալը .	հօխա	—8-20
» կիրիւ .	»	—8
Աճառ (Սաղմոն) Գանտիա .	»	—6-10
» Միլիլի .	»	—5
Բընիճ Եղիպատս Բէշիւ .	»	—5-20
» Տիւնաթ .	»	—

ՄԵՏԱՔԱ

(ԻՓԼ.Ք)

Յիւլիսիւն 40 —	և 44-12 .	450-500
Խոզակ Պուրա չոր .	միջակ .	90-100
» Պարսկաստանի .	» Ֆրանք .	52-60

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐՔ

Խոհիլ Բիւս և Գալիս .	400 լրա	1050-1150
» Մաթիլի և Սէլլան .	» «	—
Շարքի գլ. (քէլէ) .	6-40 լրա	—
» Փոշի (թօզ) .	» «	—
» Հոլ. զլուխ .	» «	280
» Փոշի .	» «	260
» Գաղղ. զլուխ .	» «	275
» Փոշի .	» «	238
» « « « « « « « « « «	» «	730
Անաղ (զալայ) .	» «	—6
Պղպեղ (պիլէ) .	» «	—
Լիւրակ (շիլի) Պիլիկալ .	» «	450
» « « « « « « « « « «	» «	440
Որդան կարմիր (զըրըզ) .	» «	65
» « « « « « « « « « «	» «	55
» « « « « « « « « « «	» «	45
» « « « « « « « « « «	» «	40
Անուշաղ (Նըշաղ) .	» «	610
Պղպեղ (Ձէլի) թիւ 0 և 00 .	» «	480
Կալալ (Գուրու) .	» «	—50
Թիֆլիս (Թէնէքէ) զոյգ մտուկ .	» «	—520
Ձինք տալտակ թիւ 7-12 .	» «	—5
Երկաթ Անդ. ձողաճեւ (չուպուղ) .	» «	66-68
» « « « « « « « « « «	» «	70-72

Տախտակ 4-14	400-410
Բոլորակ «	150-155
Ռուսիոյ «	120-150
» «	—100
Գարֆիճալ վարիլ 59 լրա .	—
Մոմ (քիւ. քիւր) Խոսիա .	—
Խաթիլիճ ձէն. զոյգ Միւս .	225
» « « « « « « « « « «	440
» « « « « « « « « « «	70
» « « « « « « « « « «	44-12
» « « « « « « « « « «	40
» « « « « « « « « « «	43
» « « « « « « « « « «	44

Աս լրագիրը շաբաթ անգամ մը կ'ելլի շաբաթ օրերը .
Ով որ կուգէ կրնայ ստորագրելի, Կ. Պոլիս Զինիլի խանը
լրագրոյ գրասենեակը : Իսկ յուրսերը հոգաբարձուներն
են :

Իճար. Խալատուր աղա Յ. Ջարիեան .
ԵԳԻՊՏՈՍ . Պոլսու Էնիլի Կարապետեան .
ԱՆԴՐՈՒՆՈՒՊՈԼԻՍ . Մանտէի Սուքիաս աղա Գա-
լուտաս .
ՏՐԱՊԻՅՈՒՆ . Պ. Խալատուր Էլմասեան .
ԿԱՐՏՆ . Կարապետ պատուելի Ջարիեան .
ԱՍՏՆԱ . Նարաթի աղա Շահպաղեան .
ՀԱԼԷՊ . Նիկողայոս աղա Տէր Մարգարեան .
ՆԻՎՈՒՐԻՒՆ . Պ. Տ. Մուրատեան .
ԹԵՔԵՐՏՆԱ . Սարգիս աղա Գիլաղեան .
ՎԱՆ . Գրիգոր Աղա Խալատեան .
ԵՐԶՐԱՆ . Ընթերցասիրաց Թանգարան :
ԱՍՏՐԱՋԱՐ . Մանտէի Յակոբ աղա Տ. Գրիգորեան .
Ուրիշ քաղաքներէ ստորագրուիլ ուղղութեան՝ այս տեղե-
րէն մեկուն հետ կրնան քրթակցել :

Օգնական Խմբակիր	Խմբակիր-Տնօրէն
Ա. Մ. ԳԵՐԳԵԱՆ	Կ. Ս. ԻՌԻՒՆԵԱՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ	Կ. ՊՈԼԻՍ ԶԻՆԻԼԻ ԽԱՆ